ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 30 » սեպտեմբերի 2025թ. № 938

## ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ նվերներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 100 780 ՀՀ դրամ:
2. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 6 300 ՀՀ դրամ
3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2025թ. № 939

## ԱԼԻԿ ՎԱՀՐԱՄԻ ԱԶԱՏՅԱՆԻ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ ՏԱՐԱԺԱՄԿԵՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Ալիկ Վահրամի Ազատյանը դիմել է Սպիտակ համայնքի ղեկավարին՝ խնդրելով տարաժամկետել Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 343 որոշմամբ սահմանված փոխադրամիջոցի գույքահարկի վճարումը, և վճարման ենթակա հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր յոթանասուն ՀՀ դրամից 2025 թվականի սեպտեմբերի 22-ին վճարել է հիսուն հազար ՀՀ դրամ՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 343 որոշմամբ Ալիկ Վահրամի Ազատյանից գանձման ենթակա փոխադրամիջոցի գույքահարկի մնացորդի՝ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր յոթանասուն ՀՀ դրամի գանձումը տարաժամկետել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալիկ Վահրամի Ազատյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 30
Ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 939 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Սպիտակ համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 30-ի թիվ 343 որոշմամբ գանձման ենթակա գումարի տարաժամկետման

| **Սպիտակ համայնքի ղեկավարի 30.04.2025թ. թիվ 343 որոշմամբ գանձման ենթակա գումարի մնացորդը (ՀՀ դրամ)** | **Ամսական վճարվելիք գումարի չափը (ՀՀ դրամ)** | **Վճարման ժամկետը** |
|---|---|---|
| 136 370 | 50 000 | 15.10.2025թ. |
| | 50 000 | 17.11.2025թ. |
| | 36 370 | 15.12.2025թ. |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2025թ. № 940

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-109-0010-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,138 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1009295 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06212TQDV8YB) և Գրիգոր Գեղամի Սարիբեկյանի (ծնված՝ 20.03.1942թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրում գտնվող 06-109-0010-0042 կադաստրային ծածկագրով 0,138 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Քարաձոր, 1-ին փողոց. 5-րդ նրբանցք, 12/1 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1825):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2025թ. № 941

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Արթուր Միքայելյանի 2025թ մայիսի 18-ի, սեպտեմբերի 29-ի զեկուցագրերը, Սպիտակ համայնքի կարիքների համար անհրաժեշտ ապրանքներ գնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 13 000 ՀՀ դրամ:
2. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածից հատկացնել 10 150 ՀՀ դրամ:
3. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Շրջակա միջավայրի պահպանություն» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 13 500 ՀՀ դրամ
4. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2025թ. № 942

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար Արթուր Միքայելյանի 2025թ մայիսի 15-ի, հուլիսի 16-ի, սեպտեմբերի 15-ի, սեպտեմբերի 24-ի, սեպտեմբերի 29-ի զեկուցագրերը, Սպիտակ քաղաքի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգման համար ապրանքներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.*** :

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորում» գործառական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածից հատկացնել 115 330 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025թ. № 943

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0094-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի, Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0094-0011 կադաստրային ծածկագրով հողամասին և դրա վրա գտնվող 109,4 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրված «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ց-4 թաղամաս 1/2-1 բնակելի» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25072025-06-0043 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 060113B79GHB) և Կարապետ Հովհաննեսի Մազմանյանի (ծնված՝ 23.01.1965 թ. ) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0094-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,032 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող 109,4 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան առկա «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ց-4 թաղամաս 1/2-1 բնակելի» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Երևանյան խճուղի, 77/5 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025թ. № 944

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0094-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի, Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0094-0008 կադաստրային ծածկագրով 0,087 հեկտար մակերեսով հողամասին տրամադրված «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ց-4 թաղամաս 112-12 հողամաս» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25072025-06-0028 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011EHEEMNM) և Կարապետ Հովհաննեսի Մազմանյանի (ծնված՝ 23.01.1965 թ. ) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0094-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,087 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի առկա «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ց-4 թաղամաս 112-12 հողամաս» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Երևանյան խճուղի, 77/6 հողամաս» հասցեով (փոստային դասիչը՝ 1801):

2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025թ. № 945

## ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, հյուրասիրություն կազմակերպելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 14 440 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբեր 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025թ. № 946

## ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԵՄԱԴՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, ՔՈԱՖ սմարթ կենտրոնի կողմից բեմադրված ներկայացման անդամների համար սնունդ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառնական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 20 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 1
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2025թ. № 947

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,1000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱԳՐԱՏ ՄԻԽԱՅԵԼԻ ՆԱՍԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 0,02419 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Բագրատ Միխայելի Նասլյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող, 06-087-0032-0007 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12419 հեկտար մակերեսով հողամասի 0,1000 հեկտարը Բագրատ Միխայելի Նասլյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 0,02419 հեկտարը՝ ուղղակի վաճառքի միջոցով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1989 թվականին կառուցված բնակելի տունը, նկուղը, աստիճանահարթակները և 1991 թվականին կառուցված ավտոտնակն ու պարիսպը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06162CGWCJRE) և Բագրատ Միխայելի Նասլյանի (ծնված՝ 04.06.1964 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրենքի ուժով ճանաչել Բագրատ Միխայելի Նասլյանի սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-087-0032-0007 կադաստրային

ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1000 հեկտար մակերեսով հողամասի, 113,3 քառակուսի մետր մակերեսով նկուղի, 36,0 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարակի, 125,7 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 32,0 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 49,8 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի, 2,2 քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:

2. Բագրատ Միխայելի Նասլյանի կողմից տիրապետվող 0,1000 հեկտար հողամասից ավել օգտագործվող 0,02419 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ ընդամենը 124 530,12 ՀՀ դրամ (1 քմ 514,8 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարել Բագրատ Միխայելի Նասլյանին:

3. Բագրատ Միխայելի Նասլյանի կողմից տիրապետվող 06-087-0032-0007 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12419 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 359 քառակուսի մետր մակերեսով շինություններին տրամադրել «Սպիտակ համայնք, գ. Շիրակամուտ, Կրասնոդարի փողոց, 5 բնակելի տուն» հասցեն:

4. Հաստատել Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող, 06-087-0032-0007 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12419 հեկտար հողամասի և դրա վրա գտնվող 359 քառակուսի մետր մակերեսով շինությունների հատակագիծը:

5. Բագրատ Միխայելի Նասլյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Ի. Կարապետյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2025թ. № 948

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-075-0016-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,129 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2025 թվականի սեպտեմբերի 9-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը (գրանցված է գրանցամատյանում 6366), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06132FVUBNNL) և Թամարա Ստասիկի Աքուլյանի (ծնված՝ 15.02.1958թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում գտնվող 06-075-0016-0001 կադաստրային ծածկագրով 0,129 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Մեծ Պարնի, 11-րդ փողոց, 37 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1818):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 2

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2025թ. № 949

## ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԷՏԻԲԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 13-ի թիվ 22 որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի ապրիլի 10-ի թիվ 44 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 29 օրդերը և Սուսաննա Հարությունի Էտիբարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082025-06-0023 վկայական՝ տրված 05.08.2025 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս. Ավետիսյան հրապարակ 1 շենք, 5 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Սուսաննա Հարությունի Էտիբարյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.
   1) Սուսաննա Հարությունի Էտիբարյան - ինքը՝ ծնված 26.02.1963 թվականին,
   2) Լիլիթ Սողոմոնի Սեյրանյան - աղջիկը՝ ծնված 05.06.1986 թվականին,
   3) Բենիկ Սողոմոնի Սեյրանյան – տղան ՝ ծնված 14.06.1988 թվականին,
   4) Բաբկեն Սողոմոնի Սեյրանյան - տղան՝ ծնված 03.01.1991 թվականին:
2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2025թ. № 950

## ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 13-ի թիվ 22 որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի ապրիլի 10-ի թիվ 44 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 27 օրդերը և Սամվել Կարապետի Բունիաթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18072025-06-0054 վկայական՝ տրված 18.07.2025 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս. Ավետիսյան հրապարակ 1 շենք, 4 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Սամվել Կարապետի Բունիաթյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.
   1) Սամվել Կարապետի Բունիաթյան - ինքը՝ ծնված 01.04.1963 թվականին,
   2) Մարինե Սերյոժայի Դավթյան - կինը՝ ծնված 14.08.1964 թվականին,
   3) Կարեն Սամվելի Բունիաթյան – տղան ՝ ծնված 04.01.1989 թվականին,
   4) Սիրվարդ Սամվելի Բունիաթյան - աղջիկը՝ ծնված 03.12.1990 թվականին:
2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Լուսինե Օհանյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 02 » հոկտեմբերի 2025թ. № 951

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ՄԱԹՈՍՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Ռոբերտ Մաթոսյանի 80-ամյակին նվիրված միջոցառման համար տորթ և շնորհակալագիր ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 8 000 ՀՀ դրամ:
2. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 տնտեսագիտական հոդվածից հատկացնել 300 ՀՀ դրամ:
3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025թ. № 952

## «ԱՄՈՒԵԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով, հիմք ընդունելով 2025 թվականի հոկտեմբերի 3-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՄՈՒԵԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2025 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը 15:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել «ԱՄՈՒԵԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 3
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025թ. № 953

## «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 136-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2025 թվականի սեպտեմբերի 29-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66968863) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. 45/2» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (հիմնական շինություն՝ 153 քառակուսի մետր մակերես) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 2025 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 3
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025թ. № 954

## «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 136-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «բ» պարբերության, հիմք ընդունելով «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2025 թվականի սեպտեմբերի 29-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66968863) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. 45/2» հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում (հիմնական շինություն՝ 153 քառակուսի մետր մակերես) ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2025 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 3
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետություն,Լոռումարզ,Սպիտակիհամայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025թ. № 955

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԿՈՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-047-0024-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,159 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1396527 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060926BNWZPE) և Անդրանիկ Պատվականի Սահակյանի (ծնված՝ 15.12.1965թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրում գտնվող 06-047-0024-0009 կադաստրային ծածկագրով 0,159 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 107,0 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 84,5 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին, 14,4 քառակուսի մետր մակերեսով շինությանը տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Խնկոյան, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 3 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչը՝ 1813):

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 3

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025թ. № 956

## 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր» 2025 թվականի համայնքային փուլի անցկացման համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման « Գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական դասակարգման 4261 հոդվածից հատկացնել 81 000 ՀՀ դրամ:
2. «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառականդասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 5 100 ՀՀ դրամ:
3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025թ. № 954

## «ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ» ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.1-ին հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, «Ուսուցչի օր» տոնի առթիվ տորթեր ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Հանրակրթական ուսուցում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 360 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 3
ք.Սպիտակ